



ՃՀՄՀԻՄԱԷ ԾՄՈՃՁՐԻՆՈՒՆԻ ԻՃԱՆՈՒՄՈՒ ՊՒՅԻՆՈՒՄՈՒ ՄՁԵՁՁ
ԾՁՉՁ

№ 757-Ա/Ք

31.08.2015թ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՀՄ. 583-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 10.06.2010 թ. թիվ 557-Ա/Ք հրամանը.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 15-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի 10.05.2010թ. թիվ 324 Ա/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 583-Ա/Ք հրամանի հավելվածի 4-րդ կետի՝

- 1) <<բ>> ենթակետում <<լրացուցիչ>> բառից հետո լրացնել <<և շարունակական>> բառը,
- 2) <<գ>> ենթակետը ուժը կորցրած ճանաչել,
- 3) <<դ>> ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ <<դ) մասնագիտական կրթության համակարգում լրացուցիչ և շարունակական կրթության ներդրման աշխատանքների կազմակերպում և համակարգում>>:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ